ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

   Մարինե Մելիքյան, Պետական պարտքի կառավարման վարչության ռազմավարության և ռիսկերի կառավարման բաժնի պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները.

   ք. Փարիզ (Ֆրանսիա) 2024թ. հոկտեմբերի 14-ից մինչև հոկտեմբերի 18-ը ներառյալ

3. Հրավիրող կողմը.

   Զարգացման Ֆրանսիական Գործակալություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

   Մասնակցություն «Կլիմայի խնդիրների ինտեգրումը և հանրային ֆինանսների ու ֆինանսական հատվածի կառավարման հզորացումը Հայաստանում» թեմայով ուսումնական այցին

5. Քննարկված թեմաները

   ա/ Կանաչ բյուջեի կազման գործընթաց և հաշվետվության կառուցվածք,

   բ/ Կանաչ պարտատոմսերի թողարկումների կառուցվածք և կառավարում,

   գ/ Պետական և մասնավոր ներդրողների կողմից ֆինանսավորվող կանաչ ծրագրերը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

   Այցելության ընթացքում տեղի են ունեցել հանդիպումներ «Զարգացման ֆրանսիական գործակալության», Կանաչ բյուջեի աշխատանքային խմբի՝ Ֆրանսիայի ֆինանսների նախարարության, էկոլոգիական պլանավորման գլխավոր քարտուղարության, Ֆինանսական գլխավոր տեսչության, Ազգային աուդիտորական դատարանի, Կլիմայի տնտեսագիտության ինստիտուտի, «France Trésor» գործակալության և «Պատասխանատու ֆինանսական դերակատարներ» ասոցիացիայի ներկայացուցիչների հետ: Քննարկվել են թե ինչպես է Ֆրանսիան

ինտեգրել բնապահպանական չափանիշները պետական բյուջեի մշակման և կատարման մեջ 2020 թվականին իրականացված իր կանաչ բյուջեի միջոցով, Ֆրանսիայում կանաչ բյուջեի ընդունման հիմքում ընկած գործընթացները, մեթոդաբանությունները և օրենսդրական շրջանակները, ներառյալ պետական ծախսերի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը, հաշվետվության մեխանիզմները, որոնք օգտագործվում են Ֆրանսիայում՝ ապահովելու բնապահպանական ծախսերի թափանցիկությունն ու արդյունավետությունը, կանաչ պարտատոմսերի թողարկման ֆրանսիական պրակտիկայից, ներառյալ կարգավորող շրջանակի ձևավորումը, կանաչ նախագծերի դասակարգումը և իրավասության չափանիշները, թե ինչպես է Ֆրանսիան մոբիլիզացնում պետական և մասնավոր ներդրողներին՝ ֆինանսավորելու կանաչ ծրագրերը՝ հիմնված հարկաբյուջետային և կարգավորիչ խթանների վրա, կանաչ պարտատոմսերի հետ կապված հաշվետվությունների և աուդիտի գործընթացները, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա մեծ ազդեցություն ունեցող նախագծերի համար միջոցների օգտագործումը, ինչպես նաև քննարկվել են ֆրանսիական փորձի Հայաստանում կիրառման հնարավորությունները և տարբերակները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

   Այցի ընթացքում որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում չի իրականացվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

   Այցելության ընթացքում ֆրանսիական փորձին վերաբերվող ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս քննարկել Հայաստանում կիրառելու հնարավորությունը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

23 հոկտեմբերի, 2024թ.

Մարինե Մելիքյան